

Արտակ Էդվարդի Ղազարյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում 1918-1920 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) վերաբերյալ ստեղծված պատկառելի գիտական գրականության մեջ քննության են առնված հանրապետության երկուսուկեսամյա պատմության ամենատարբեր խնդիրները՝ սոցիալ-տնտեսական դրությունից մինչև արտաքին քաղաքականությանն ու սահմանային խնդիրներին առնչվող հարցերը: Այդ առումով հայ պատմագիտությունը մեծ ձեռքբերումներ ունեցավ հատկապես 1991 թ. վերանկախացմանը հաջորդող ժամանակահատվածում:

Հասկանալի պատճառներով, պատմաբանների կողմից հատուկ ուշադրության արժանացած հարցերի թվում է եղել հայ-վրացական հարաբերությունների խնդիրը: Այդ թեմայով հաջորդաբար լույս են տեսել Ա. Մելքոնյանի (1999, 2003), Կ. Սարգսյանի (2002), Վ. Վիրաբյանի (2003, 2015, 2016) ուշագրավ մենագրությունները, նաև այլ հետազոտություններ, հրատարակվել են այդ հարաբերությունները լուսաբանող տասնյակ արժեքավոր փաստաթղթեր: Թեև թվարկված և այլ ուսումնասիրություններում անդրադարձ կա Վրաստանում ՀՀ դիվ. ներկայացուցչության գործունեության առանձին դրվագներին, այդուհանդերձ, սույն հիմնախնդիրը մինչ այս ամբողջական կերպով չի լուսաբանվել: Նշյալ հանգամանքով է պայմանավորված Արտակ Ղազարյանի ներկայացրած «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում 1918-1920 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության կարևորությունը, նաև դրանից է բխում աշխատանքի գիտական նորույթը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխանաբար 3, 4, 2, 2 ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսության նպատակը համարելով առկա աղբյուրագիտական նյութի օգտագործմամբ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ձևավորման ու գործունեության ուսումնասիրությունը՝ հեղինակն անդրադարձել է ներկայացուցչության ձևավորմանը, 1918թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմի նախօրյակին և ընթացքում, 1919 թ. հունվարյան կոնֆերանսի օրերին նրա գործունեությանը, 1919 թ. մարտին վերաբացման գործընթացին: Առանձին խումբ են կազմում հայությանն առնչվող ու հուզող տարբեր խնդիրների կարգավորման գործում (հայ գաղթականության, Վրաստանում գտնվող հայկական ունեցվածքի, երկկողմ

ատնորատնտեսական կապերի, ռազմաքաղաքական դաշինքի հեռանկարի, նաև վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքին հակազդելու խնդիրներ և այլն) ներկայացուցչության գործունեությանը նվիրված շարադրանքը:

Վերը թվարկված հարցերը թեկնածուական ատենախոսության մեջ հիմնական մասով լուսաբանվում են բավարար մակարդակով, հեղինակը կատարում է ուշադրության արժանի եզրահանգումներ: Այն աչքի է ընկնում գրագետ շարադրանքով, վրիպակների փոքր քանակով: Աշխատանքի ամենից տպավորիչ ու դրական կողմը, մեր կարծիքով, օգտագործված արխիվային նյութի մեծ չափաբաժինն է (հիմնականում ՀԱԱ, ֆ. 276, ց. 5-ից), առաջին անգամ շրջանառության մեջ դրված փաստաթղթերը, որոնք նորովի են ներկայացնում մասնավորապես Լևոն Եվանգուլյանի գործունեությունը: Ատենախոսը հատկապես բարձր է գնահատում (էջ 112-113) հայ-վրացական հարաբերություններում եղած վիճելի խնդիրները կարգավորելուն ուղղված Լ. Եվանգուլյանի թափած ջանքերը: Ուշադրության արժանի են նաև Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ձևավորման, Վրաստանի տարածքում ՀՀ հյուպատոսությունների հիմնադրման ու գործունեության վերաբերյալ շարադրանքը:

Այս ամենով հանդերձ՝ թեկնածուական ատենախոսությունում կան առանձին թերություններ և բացթողումներ: Կատարված մեծ ծավալի աշխատանքը շատ ավելի կանոնավորված տեսնելու նպատակով՝ ներկայացնենք մեր հիմնական դիտարկումները, առաջարկներն ու դիտողությունները: Դրանք վերաբերվում են ինչպես աշխատանքի կառուցվածքին, այնպես էլ բուն շարադրանքին:

1. Ատենախոսության «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ»-ում հիշատակված գրքերի և հոդվածների կեսից ավելին շարադրանքում փաստացի չի օգտագործվել: Այսպես՝ «Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ»-ի 18 անունից չի օգտագործվել 8-ը (այդ թվում՝ ՀՀ պառլամենտի նիստերի արձանագրությունները), «Կուսակցական և պետաքաղաքական գործիչների աշխատություններ, հուշագրություններ»-ի 44 անունից՝ 21-ը (այդ թվում՝ Ա.-Դոյի «Հայության երկունքը», Լեոյի «Մահմանավեճեր»-ը, Ս. Վրացյանի հուշերը), «Ուսումնասիրություններ»-ի 87 գրքից՝ 48-ը (այդ թվում՝ Ադասի Եսայանի, Շիրակ Թորոսյանի, Լենդրուշ Խուրշուդյանի, Կարեն Խաչատրյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի (հայ. հտ. 3, անգլ. հտ. 1-4), Տիգրան Ասոյանի, Գայանե Մախմուրյանի մենագրությունները), «Հոդվածներ»-ի 32 անունից՝ 22-ը: Այն է՝ ցանկի 181 անունից 99-ը շարադրանքում չի օգտագործվել: Կարծում ենք, գրականության ցանկն ավելորդ ծանրաբեռնելու, ուռճացնելու կարիք չկար:

2. Սպասելի էր, որ թեմային հարակից խնդիրների մասին շարադրելու փոխարեն ատենախոսությունում ենթազույսներ լինեին ներկայացուցչության ստորաբաժանումների

(առանձնապես տեղեկատու բյուրոյի և զինվորական ներկայացուցչության), անձնակազմի ընթացիկ գործունեության, առօրյայի վերաբերյալ: Այս դեպքում թեմային հարակից խնդիրների վերաբերյալ շարադրանքը և փաստաթղթերի նկարագրությունները կկրճատվեր: Աշխատանքում սուղ էջեր են հատկացված (հիմնականում էջ 33-34) տեղեկատու բյուրոյին. սա այն դեպքում, երբ այն կոչված էր տեղեկատվություն պատրաստելու ոչ միայն Թիֆլիսի ներկայացուցչության, այլև ՀՀ ԱԳՆ ապարատի համար: Փոխարենը աշխատանքի գերակշիռ մասը Թիֆլիսում ՀՀ երեք դիվանագիտական ներկայացուցիչների և նրանց փոխարինող Մ. Թումանյանի հիմնականում ուղարկած գրությունների՝ ժամանակագրական կարգով, ավել կամ պակաս հաջողությամբ իրար կցված պարզ վերաշարադրանք է, ինչի պատճառով այն մինչև վերջ չմշակված նյութի տպավորություն է թողնում: Ըստ այդմ, օրինակ, աշխատանքի 3.1 ենթազվիի շարադրանքն իրականում վերաբերվում է ոչ թե Թիֆլիսի ներկայացուցչության գործունեությանը Վրաստանից Հայաստան գենք-զինամթերքի ու ռազմական և այլ ունեցվածքի տեղափոխման, զինակոչի խնդրում (ինչպես վերնագրված է ենթազուխը), այլ հիմնականում նշված խնդիրների վերաբերյալ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների գրած, նաև որոշ ստացած գրությունների ներկայացմանը: Նույնը կարելի է ասել նաև մյուս ենթազուխների դեպքում: Մեր կարծիքով, սա ատենախոսության առավել խոցելի կողմերից է:

3. Երբեմն մեկ-երկու բառ փոխելով առանց չակերտներ օգտագործելու ատենախոսության շարադրանքում աղբյուրներից բաղվածքներ են բերվել (համեմատել ատենախոսության էջ 21-22-ը Ռիչարդ Հովհաննիսյանի գրքի (2005) էջ 43-44-ի հետ, ատենախոսության էջ 62-ը՝ Թիֆլիսի «Աշխատավոր» թերթի 24.08.1918, N 115, էջ 1-ի հետ, ատենախոսության համապատասխանաբար էջ 86-87 և 88-ը՝ Մարտիրոս Հարությունյանի գրքի (2017) էջ 103-104 և 114-ի հետ):

4. Շարադրանքում նկատելի քանակ են կազմում հատուկ անունների (հատկապես անձնանունների) սխալ գրությունները: Մի քանի օրինակ բերենք. «ռայխսկանցլեր ֆոն Հերտլինդ» (էջ 22, պետք է լինի՝ «ֆոն Հերտլինգ»), 1920թ. օգոստոսի համար գրված է «ՌԽՖՍՀ» (էջ 27, պետք լինի՝ «ՌՍԴԽՀ» կամ էլ՝ «ՌՍՖՍՀ»), «Ձ. Խունունց» (էջ 54, պետք է լինի՝ «Չ. Խունունց»), «Վ. Օհանջանյան» (էջ 76, պետք է լինի՝ «Բ. Օհանջանյան»), «Ն. Ղորղանյան» (էջ 88, պետք է լինի՝ «Գ. Ղորղանյան»):

5. Ատենախոսի ուշադրությունը հրավիրում ենք նաև այլ խնդիրների վրա: Մասնավորապես երբեմն գրությունների հեղինակների կամ հասցեատերերի անունները գրված են առանց ինիցիալի կամ էլ ինչպես հանդիպում է փաստաթղթում (օրինակ՝ «Իշխան Արդուրինսկին» (էջ 73), «Վրաստանի ԱԳ նախարարի պաշտոնակատարը» (էջ 74) և այլն): Աղբյուրներից մեջբերումների ուղղագրության դեպքում միօրինակություն չկա: Երբեմն պահպանվել է ավանդական ուղղագրությունը (տե՛ս էջ 66-67, 131), իսկ երբեմն էլ՝ ոչ (տե՛ս էջ

76-77, 169-170): Ցանկալի էր անդրադառնալ 1920 թ. դեկտեմբերին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության անցման գործընթացին: Միայն են գրված (էջ 225) ՀԱԱ Երևանի Հայոց ազգային խորհրդի (Ֆ. 289-ի փոխարեն Ֆ. 290 է գրված) և Բաթումի հյուպատոսության (Ֆ. 275, ց. 3-ի փոխարեն Ֆ. 368 է գրված) ֆոնդերի համարները:

Բնականաբար, վերը թվարկված թերություններն ու բացթողումներն ազդում են թեկնածուական ատենախոսության որակի վրա: Առաջին հերթին ատենախոսության կառուցվածքն ամենևին չի նպաստել կուտ աշխատանք ստեղծելուն՝ հեղինակին «դրդելով» տարբեր ենթագլուխներում գրել միևնույն խնդիրների մասին: Սակայն ամբողջության մեջ վերցրած ներկայացվածը ուշադրության արժանի փաստառատ աշխատանք է, որում օգտագործված են նախորդ հետազոտողներին անձանոթ տասնյակ նոր փաստաթղթեր: Կարծում ենք՝ սա աշխատանքի դրվատելի ու գնահատելի կողմերից է:

Ամփոփելով՝ նշենք, որ Արտակ Էդվարդի Ղազարանի ներկայացրած «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում 1918-1920 թթ.» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտական թվանիշին, սեղմագրում և հրատարակված ինը հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության թեման միանշանակ արդիական է, աշխատանքում շրջանառված են նոր վավերագրեր, ներկայացված են ուշադրության արժանի դրույթներ ու եզրահանգումներ: Ուստի՝ կարծում ենք, նշված աշխատանքի հեղինակն արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
19.04.2021 թ.

Հ.Գ. Սուրխայան

Պ.գ.թ., դոցենտ Հ. Գ. Սուրխայանի ստորագրությունը հաստատում եմ

ՀԱԱՀ գիտական քարտուղար, գ.գ.թ., դոցենտ
19.04.2021 թ.

Գ.Վ. Ավագյան

